Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից Հայկական մեդիա դաշտի մոնիթորինգի և վերլուծության, ավտոմատացված առցանց հարթակի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-25/3 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

27.11.2024թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Թորոսյան, Լ. Անտոնյան, *Ն. Գևորգյան, Տ. Բաղալյան
Նիստից բացակայում է՝ Ն. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Թադևոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	համացանցային էջեր դիտելու (browsing) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	2088000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 25.11.2024թ.-ին ժամը 12:00-ին: Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 26.11.2024թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«Ռումորս» ՍՊԸ	ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55/17,199	011 205151	info@rumorsmonitoring.com

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-25/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Ռումորս» ՍՊԸ	2088000	0 %	2088000	2088000	0 %	2088000	

Աճուրդն ամփոփվել է 26.11.2024թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Ռումորս» ՍՊԸ-ն:

7. Տեղեկություն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ռումորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթերը արձանագրեց՝ **«Ռումորս» ՍՊԸ-ի** հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ 1-ին կետում ներկայացվել է Հրավերի պահանջներին անհամապատասխան՝ թերի տեղեկատվություն, մասնավորապես՝ «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել նշելով՝ «1) «Ռումորս» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-25/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «Ռումորս» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում»: Մասնակցի ղեկավարի պաշտոնը բացակայում է:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասի

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 29.11.2024թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Լաուրա Անտոնյան

_____ Տիգրան Բաղալյան

քարտուղար՝ _____ Հեղինե Թադևոսյան